

յագիտական բաժնում: Փարիզը չի կարող լինել աշխարհի, ինչ նրանի համալսարանը:

Մի բանի տարի առաջ Իսպահանի համալսարանի գրական ֆաբուլիստ Գ. Գյուլպենկյան հաստատությունից 5 հազար դոլար ստացավ՝ հայագիտական զոադարան հիմնելու համար: Ուսանողները կարող են օգտվել նաև Ն. Զուրաբյի վանքի հայկական գրադարանից: Գրանոյ հանդերձ գրական ֆաբուլիստ ուսանողները և դասատուները մեծապես կարիք ունեն հորհրդային Հայաստանում նախկինում և այժմ հրատարակվող, ինչպես նաև հետազային հրատարակվելիք հայագիտական, գրական, պատմական հրատարակությունների: Ուսանողությունը միայն այդ նոր ուսումնասիրություն-

ների ընթերցանությամբ կարող է լրացնել իր գիտական թերին:

Հատկապես անհրաժեշտ են մեծ հայագետներ Մ. Արեղյանի, Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի, Ս. Մալխոսյանի, ինչպես նաև է. Աղայանի, Գ. Զահուկյանի, Ա. Ղանալանյանի և այլ նշանավոր բանասերների և հայագետների ուսումնասիրությունները՝ ոչ միայն Իսպահանի, այլ նաև Թեհրանի պետական համալսարանի հայագիտական բաժնի համար: Անշուշտ կարևոր է լեզվաբանական, պատմագիտական և այլ հանդեսների և ամսագրերի կանոնավոր առաքումը: Շատ անհրաժեշտ է նաև օրաթերթերի ու շաբաթաթերթերի առաքումը:

Պրոֆ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՆՆԱԶԱՐՅԱՆ (Թեհրան)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

DOCUMENTI DI ARCHITETTURA ARMENA. I. Hakhpat. Testo: Stephan Mnazaganian ed Adriano Alpago-Novello. Documentazione fotografica: Adriano Alpago-Novello ed Armen Manoukian. Tradizioni: dall'armeno—Armen Zarian; in inglese—Claudia Accinni e Daniela Fano. Milano, Edizioni Ares, 1968, 47 p., ill.

«Հայկական ճարտարապետական հուշարձաններ» մատենաշարի այս անդրանիկ գիրքը «Հաղբատը», շքեղ տպագրությամբ լույս է տեսել Միլանում՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի և Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի համագործակցությամբ և Հակոբ ու Արմեն Մանուկյանների խմբագրությամբ:

Գիրքը լույս է ընծայվել իտալերեն և անգլերեն զուգահեռ տեքստով: Ծարճարապետության դոկտոր Ստեփան Մնացականյանը գրել է «Հաղբատի (X—XIII դդ.) վանքի կոմպլեքսը» պատմական ակնարկը, իսկ իտալացի ճարտարապետ Ադրիանո Ալպագո-Նովելլոն՝ «Հաղ-

բատի ճարտարապետությունը» (էջ 6—9) նկարազարկան-վերլուծական հոդվածը:

Գրքում զետեղված են հիսունից ավելի գունավոր ու միագույն լուսանկարներ և քսանից ավելի չափագրություններ ու հատակագծումներ: Վանքը պատկերող լուսանկարները կատարել են ճարտարապետներ Արմեն Մանուկյանը և Ադրիանո Ալպագո-Նովելլոն, որոնք 1967 թ. շրջագայել են Սովետական Հայաստանում:

Հայկական ճարտարապետական հուշարձաններից մեկին՝ Հաղբատին նվիրված այս ուսումնասիրությունը կնպաստի հայ միջնադարյան ճարտարապետությունը օտար լեզուներով ընթերցողներին ծանոթացնելու և հայ մշակույթի տարածման գործին:

REVUE DES ETUDES ARMÉNIENNES. Nouvelle série. Tome V. Publié par le concours de la Fondation Calouste Gulbenkian. Paris, Librairie C. Klincksieck, 1968. 504 pp.

Արտասահմանում լույս տեսնող օտար լեզվով հայագիտական ասենարժեքավոր պարբերական հրատարակության հերթական հինգերորդ հատորը հարուստ է իր բովանդակությամբ: Այս համարը պարունակում է քառասունից ավելի

ուսումնասիրություններ, հոդվածներ, գրախոսականներ և հաղորդումներ:

Բանասիրական ուսումնասիրություններից հիշատակության արժանի են՝ է. Բենվենիստի «Հունարեն բարդ բառերի հայերեն թարգմանությու-

ներ», Անահիտ Փերիխանյանի «Ծանոթություններ պարսկերեն և հայերեն բառագրքերի մասին», Ժորժ Դյումենիլի «Վակիֆիի (Մուսա լի-ռի) հայ բարբառը», Գ. Սարգսյանի «Դաստակերտ բառի երկու իմաստները հայ հին աղբյուրներում» աշխատությունները:

Հետաքրքիր են նաև Վ. Հարությունյանի «Քաղաքաշինությունը միջնադարյան Հայաստանում», Ժ. Թիերիի «Վասպուրականի հայկական վանքերը», Պաուլո Կունեոյի «Սորադիրի Սուրբ Էջմիածին եկեղեցին Վասպուրականում», Պ. Մուրադյանի «Ջվարիի եկեղեցու հայկական արձանագրությունը», Հ. Պերպերյանի «Պերիլ-լեպտոսի բյուզանդական վանքը», Գ. Դեդյուրանի «Ծանոթություններ Գրիգոր Տաթևացու նրկու աշխատությունների վերաբերյալ», Ա. Ռենուի «Հայկական ծեսի բառասուրբյալը ընթերցումները», Հ. Բարթիկյանի «Արևորդիները Հայաստանում և Միջագետքում և ներսես Շնոր-

հալի կաթողիկոսի թուղթը», Լ. Բարսեղյանի «Գեղամա լեռների վիշապները» (արտատպված «Պատմա-բանասիրական հանդես»-ից), Մ. Կանարի «Վարդանի համաշխարհային պատմության մի դրվագի թարգմանության վերաբերյալ՝ Պարսկաստանի մոնղոլների և Ոսկե հորդայի մոնղոլների կոիվների մասին» և այլ հոդվածներ:

Հատուկ շահեկան նյութեր ունեն նաև Պոլ Լըմերլը, Տ. Իզմաիլովան, Լուի Լըլուաուր, Ի. Տոմսոնը, Ա. Տեր-Ղևոնդյանը և ուրիշ հայագետներ:

Հանդեսի գրախոսականների բաժնում գրախոսված են Հայաստանում և արտասահմանյան զանազան երկրներում լույս տեսած հայագիտական հրատարակություններ: Գրախոսականները և մատենագիտական ընդարձակ անոտացիաները գրել են Ս. Տեր-Ներսեսյանը, Հ. Պերպերյանը, Ժ. Թիերին, Յա. Դաշկևիչը, Դ. Լանգը, Ա. Յակոբսոնը և Ռ. Վիլկինսոնը:

ՔԱՍՈՒՆԻ ԵՐՎԱՆԻ Հ.: Ամիդ (Դիարբեքիր)—Տիգրանակերտ (Ֆարդին) շփոթը հայ պատմագրության մեջ: Բեյրութ, 1968, 110 էջ, նկարագրող:

Յոթ գլուխներից բաղկացած այս գիրքը նվիրված է հայ պատմագրության մեջ Ամիդ և Տիգրանակերտ քաղաքները միմյանց հետ շփոթելու հարցին, որը գալիս է դեռևս հորենացուց և Փավստոս Բյուզանդից:

Հայ և օտար սկզբնաղբյուրների, պատմաաշխարհագրական ուսումնասիրությունների և փաստական տվյալների հիման վրա հեղինակը աշխատել է ապացուցել, որ պատմական Հայաստանի այդ երկու քաղաքները գոյություն են ունեցել իրարից բոլորովին անկախ:

Հեղինակը պատմական մի ակնարկով տալիս է նաև հայ բնակչության դժվարին կյանքը, ռազմագիտական և առևտրական կարևոր դիրք ունեցող Ամիդում, որտեղ հաջորդաբար իրենց

իշխանությունն են հաստատել ասորեստանցիները, հռոմեացիները, պարսիկները, հույները, արաբները, սելջուկները և թուրքերը:

Հանգամանորեն քննության առնելով հայ պատմագիրներից մինչև մեր օրերի հեղինակների երկերում Ամիդն ու Տիգրանակերտը շփոթող կարծիքները, փաստական տվյալներով նա ապացուցում է, որ «այս երկու քաղաքները իրարմե կարևոր հեռավորության վրա գտնվող երկու տարբեր կառույցներ են, ժամանակագրական կարգով իրարմե հեռու շրջաններու մեջ շինված»: Գիրքը հարուստ է զանազան սկզբնաղբյուրներից, մենագրություններից և հոդվածներից հատվածաբար բերված վկայություններով:

TRYJARSKI EDWARD. Dictionnaire Arméno-Kiptchak. D'après trois manuscrits des collections viennoises. Tome I. Fascicule 3, X—O. Warszawa, Państwowe Wydawnictwo Naukowe, 1969, pp. 433—603.

է. Տրիարսկու հայ-ղփշաղերեն բառարանը պատմա-բանասիրական արժեքավոր մի ուսումնասիրություն է և ազգագրական կարևոր աղբյուր: Այս հրատարակությունը, որը բաղկանալու է երեք հատորից, նպատակ ունի ներկայացնել Վիեննայի ձեռագրական հավաքածուներում հայտնաբերված երեք ձեռագրերի թուրք-ղփշաղերեն բառային կազմի ամբողջու-

թյունը: Ներկա հրատարակությունը 1968 թ. լույս տեսած հայ-ղփշաղերեն բառարանի առաջին հատորի երկու տետրակների շարունակությունն է, որն ընդգրկում է k, l, m, n, o տառերը:

Աշխատությունում բառերի բացատրությունները ներկայացված են հոդվածի ձևով, իսկ աղբյուրների բնագրային բառերի տառադար-

ձուլությունները տրված են յուրաքանչյուր հող-վաճի վերջում: Այն դեպքում, երբ հայ-ղփշա-ղերեն բառի իմաստը կամ ծագումը բավականաչափ պարզ չեն նշված, բառիմաստը ավելի որոշակի և հասկանալի դարձնելու նպատակով գրված է նաև համապատասխան հայերեն բառը, որի թարգմանությունը պարզաբանված և ստուգված է հայկական բառագիտական աղբյուրների միջոցով: Անտարակույս այս հանգամանքը օգտակար կարող է լինել ապագա ուսումնասիրությունների համար:

Վարչավայի պետական գիտական հրատա-ռակչության կողմից լույս ընծայված այս աշխատությունը խմբագրել է Լեհաստանի գիտու-թյունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ղեկավար Անանիազ Ջալոնշ-կովսկին:

Բաղմամյա աշխատանքի արդյունք հանդիսա-ցող այս գործը գիտական արժեքավոր մի ներդրում է հայ-ղփշաղ բանասիրության աս-պարեզում:

ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԵՆ: Պատմական քննարկումներ: Բեյրութ, հրատ. Կ. Տոնիկյան և որդի, 1968, 230 էջ:

Գրքում զետեղված են սփյուռքահայ պատմա-բանի 1958—1967 թթ. ընթացքում գրած հե-տևյալ հոդվածները՝ «Մովսես Խորենացի—ա-ռաջին հայ ազգայնականը», «Հայ պատմագրու-թյունը», «Խորենացիի պատմության շնորհորդ» գիրքը», «Խորենացիի և Փավստոս», «Խորենա-ցին և աղբյուրներու ընտրությունը», «Մամի-կոնյանները Արշակունյաց օրով», «Մուշեղ Մա-միկոնյան—առաջին հայ դիկտատորը», «Տըր-դատ Գ. և քրիստոնեություն (Ժամանակագրա-կան)», «Փավստոս Բուզանդ և Ստեփան Մալ-

խասյան», «Գահ և աթոռ (Արշակունիք և Լու-սավորչյաններ)»:

Այս հոդվածներից 9-ը տարբեր պարբերա-կաններում (այդ թվում՝ «Պատմա-բանասիրա-կան հանդես»-ում) հեղինակի տպագրած հոդ-վածների վերահրատարակություններն են, իսկ մեկը հրապարակվում է առաջին անգամ:

Հեղինակը քննական մոտեցումով է վերա-բերվում հայ ժողովրդի պատմության կնճռոտ հարցերին և օգտակար ծառայություն է մա-տուցում սկզբնաղբյուրների քննական ուսում-նասիրության գործում:

ՀԱԶԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՂԻՇԵ: Ի՛նչպես ապրեցանք: Տարեմտե, շրջակա հայ գյուղերը և ընտանեկան հուշեր: Բեյրութ, Տպարան Շիրակ, 1968, 118 էջ, նկա-րագրով:

Գիրքը համառոտակի հուշագրություններ է պարունակում Սեռաստիայի Տարենտի ավանի և նրա շրջակա գյուղերի մասին: Աշխարհագրա-կան տեղեկություններից բացի ազգագրական ծանոթություններ են տրվում Տարենտի 15000 բնակչության, հայկական թաղերի, եկեղեցու, յայրոցի և նրա մոտակա գյուղերի մասին (Աշո-

տի, Կամիզար, Սեթրեկ, Ֆենք, Մանկալոս, Աղ-ճատաղ և այլն): Գրքում նկարագրված են նաև 1895—1915 թթ. դեպքերը Գիրքը փաստորեն տարադիր հայի դժվարին կյանքի և զաղթա-կանության ուղու նկարագրությունն է: Հեղինա-կը տալիս է նաև Տարենտում գործածված բար-բառային բառերի ցանկը:

ՇԱՀՊԱՋՅԱՆ ՀԱԿՈՐ ՂԱՐԻԲ: Թանգարան—գյուղը մեր և սիրո արյունոտ ածուներ: Ֆրանսիա, 1967, 556 էջ:

Այս հուշամատյանը նվիրված է խորհրդի շրջանի Դատև գյուղաքաղաքին, որտեղ ապրե-լիս է եղել հայ ժողովրդի մի փոքրիկ հատվածը:

Հ. Շահպաղյանի այս երկը բաղկացած է եր-կու գրքից. առաջինը՝ «Բանդարան—գյուղը մեր» (էջ 7—282), ունի ազգագրական բովան-դակություն, իսկ երկրորդը՝ «Սիրո արյունոտ

ածուներ» (էջ 283—552), պատմվածքներ են:

Դատևի մասին աշխարհագրական տեղեկու-թյուններից հետո ներկայացված է գյուղի ար-հեստավորական և առևտրական կյանքը: Հեղի-նակը ընթերցողին մանրամասն ծանոթացնում է շուրջ 430 հայ և 20 թուրք ընտանիքներից բաղ-կացած այս գյուղի կենցաղի ու սովորու-թյուն-

ների հետ, նկարագրում է այդ վայրերի բուսական ու կենդանական աշխարհը, պատմում է հայկական տոնակատարությունների ու մարզական խաղերի մասին:

Գրքում տեղ է գտել նաև էփրիկյանի բնաշխարհիկ բառարանից քաղվածաբար բերված

«խարբերդ նահանգի ընդհանուր գրապատկերը (1890—1903 թթ.)» վիճակագրությունը:

Գրական բաժնում տեղ են գտել «Որրը», «Հետադիմության զոհեր», «Հայաստանություն թուրք որովայնի մեջ» և «Կույրը և միականին» պատմվածքները:

ԻՆԳԼԻՉՅԱՆ ՎԱՀԱՆ: Ուսումնասիրություններ և բնագիրներ: Վիեննա, Մխիթարյան տպարան, 1968, 114 էջ:

«Հանդես ամսօրյայի» էջերում 1961, 1962 և 1965 թթ. հեղինակի տպագրված երեք աշխատությունների վերահրատարակությունն է այս գիրքը, որը հայերեն ձեռագրերի և հունարեն բնագրերի վրա կատարված հետաքրքիր ու բարեխիղճ աշխատանքի արգասիքն է:

Վիեննական «Ազգային մատենաշարի» 206-րդ հատորը հանդիսացող այս գրքում զետեղված

են հայերեն և օտար լեզուներով հայագիտական բազմաթիվ աշխատությունների հեղինակ Վահան Ինգլիզյանի «Կյուրդի Երուսաղեմացվոթուղթ առ Կոստանդիանոս կայսր», «Հատված մը Ոսկեբերանի Մատթեի Մեկնության Կեսարյան գրքեն», «Հատված մը Ոսկեբերանի Եփեսացվոց թղթույն Մեկնութենեն» ուսումնասիրությունները:

SURMELIAN LEON, Apples of Immortality: Folktales of Armenia. Illustrated by Stewart Irwin. London, George Allen and Unwin Ltd, 1968, 319 p. ill.

Սփյուռքահայ գրող և թարգմանիչ Լեոն Սյուրմելյանի լույս ընծայած այս վերջին աշխատությունը, որ կոչվում է «Անմահական խնձորներ», ամփոփում է հայ ժողովրդական 40 հեքիաթներ:

Գրքի ներածականում (էջ 11—39) Լ. Սյուրմելյանը գրում է հայ ժողովրդի դարավոր մշակույթի, նրա պատմական հարուստ անցյալի ու մեծագույն նվաճումներով լի ներկայի մասին: Ներածականում հեղինակը խոսում է նաև հայկական ժողովրդական հեքիաթների, նրանց բանահավաքների, հայ բանահյուսության լեզվական որոշ առանձնահատկությունների, ինչպես նաև հայ ժողովրդական բանահյուսության և Հայաստանի հարևան երկրների ու եվրոպա-

կան որոշ ժողովուրդների բանահյուսության միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների ու փոխադարձ ազդեցությունների մասին: Ժողովածուի հեքիաթները թարգմանիչ-հեղինակը ընտրել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսած «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատոր հրատարակությունից: Ժողովածուում տպագրված են հրաշապատում ու կենցաղային, ավանդական ու զավեշտական, կախարդական ու այլ տիպի հեքիաթների նմուշներ: Արժեքավոր է նաև հատուկ լինողի «Ծանոթագրություններ» բաժինը (էջ 303—319):

حماسه اندوه. مجموعه‌ای از شعر ارمنی. ترجمه «الك خاجادوربان». تیران ۱۳۴۷. ۲۱۶ ص.

Վշտի դուցազներգություն: Հայ բանաստեղծների ստեղծագործությունների հատրմտիր:

Պարսկերեն լույս տեսած այս գրքի առաջաբանում պարսիկ գրականագետ Ահմադ Շամ-լուն ներկայացնում է ժողովածուն պարսիկ ընթերցողներին, որոնք այս հատորի միջոցով կձանոթանան հայ բանաստեղծության մի քանի ներկայացուցիչների կյանքի ու ստեղծագործությունների հետ:

Ժողովածուում իրենց աթժանի տեղն են գտել Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Թումանյանը, Դանիել Վարուժանը, Շուշանիկ Կուրդինյանը, Սիամանթոն, Պետրոս Դուրյանը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Գեղամ Սարյանը, Արշավիր Դարբին և Հենրիկ Թումանյանը: Շատ հեղինակների լուսանկարների հետ գրքում

կան նաև կենսագրական համառոտ տեղեկություններ:

Բանաստեղծությունների թարգմանիչ Ալեք Խաչատրյանը իր ներածական հոդվածում համառոտ մի ակնարկ է գցում հայ գրականության դարավոր պատմության վրա, իսկ թե՛

բանարևակ բանասեր Թեյմուր Գուրգենը «Ճանաթություն» բաժնում (էջ 1—21) գրականագիտական մանրամասն վերլուծության է ենթարկել հատրնտիրում գետեղված բանաստեղծությունները:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

ՀԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ

Երևանի տերիտորիայում 1965 թ. հնագիտական մի նոր հայտնաբերում կատարվեց Գեղեցեկի փողոցում (Երևանի հյուսիսային մաս, Կիր-ազա), հնվող կաշույրի ֆարքիկայի ու արհեստական ալմաստների գործարանի և անասնահումքային բազայի միջև, հողային աշխատանքներ կատարելու ժամանակ: Որոշ ժամանակ անց այդ նույն վայրում, առաջին դամբարաններից մի քանի մետր հեռավորությամբ, բացվեցին նոր դամբարաններ¹:

Դամբարանները հիմնականում ավերված են և այդ պարագան թույլ չի տալիս խոսելու նրանց կառուցվածքի մանրամասնությունների մասին: Անկներև էր միայն, որ ուշ թաղումները կողքերից շարված էին քարերով՝ Թաղաքենդի ուշ թաղումների նմանությամբ²:

Կիսավեր դամբարանների ուսումնասիրությունը պարզեց, որ թաղումները կատարված էին զետեի մակերևույթից հաշված շուրջ 2 մետր խորությամբ: Ուշ շրջանի դամբարաններից մեկում կատարված էր դույզ թաղում, մյուսներում՝ մեկական: Թաղումներից մեկը կատարված էր հարավ-արևելքից՝ հյուսիս-արևմուտք կողմնորոշումով, մնացած զեպքերում կողմնորոշումը պարզել անհնար էր՝ դամբարանների խիստ վնասվածության պատճառով:

Հայտնաբերված իրերի ժամանակագրական խիստ տարբերությունը և տեղի բնակիչների վկայություններն ալն մասին, թե տնամերձ հողամասերում և բակերում տնտեսական նպատակներով կատարած հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են տարբեր բնույթի հնագիտական առարկաներ, թույլ են տալիս կարծելու, որ հիշատակված դամբարանները մասն են կազմում ժամանակագրական լայն

ընդգրկում ունեցող (առնվազն 8 դար) բրոնզե-դարյան ընդարձակ դամբարանադաշտի:

Այս ենթադրությունը փաստացի այլ նյութերով ամրապնդելու նպատակով կատարված տեղանքի զննումը, սակայն, ոչ մի արդյունք չտվեց, արտաքին նշանների բացակայությամբ, ինչպես նաև տեղանքի բնակեցված լինելը բացառում են նոր դամբարաններ հայտնաբերելու և պեղելու որևէ հնարավորություն: Այսուամենայնիվ առկա հնագիտական նյութը որոշակի հետաքրքրություն ներկայացնում է, որքանով համալրում է Երևանի տերիտորիայի հնագույն նյութական մշակույթը բրոնզի դարում:

Ոչնչելով մեր ձեռքի տակ եղած հնագիտական նյութի առանձնահատկություններից, հարմար ենք համարում դա երկու առանձին խմբով ներկայացնել:

Առաջին խումբը բաղկանում է մեկ դամբարանից ծագող երեք կավանոթներից: Այս խմբի կավանոթներից առաջինը ղեղնավուն կավից պատրաստված և կարմրով ներկված կճուճ է (աղյուսակ 1, 1): Շուրթը կլոր է, դուրս ծալված: Կավանոթի վերին կեսը հարուստ դարդանախշված է սև ներկով: Առաջին գոտին ներկայացնում է երկու հորիզոնականներում պարփակված, զազաթով ղեպի վեր ուղղված զծածակ եռանկյունիներ: Դրանից ներքև անցնում է հորիզոնական և ալիքաձև զծերի համադրությամբ դոշացած ժանյակաձև զարդազուտին: Կավանոթը իրանի հատակին հարող մասում ունի 0,8 սմ տրամագծով մի անցք: Երկրորդ կավանոթը երկկոն իրանով և ղեպի ներս կտրված շրթով քրեղան է (աղ. 1, 2): Կավը գույնով և բաղադրությամբ նույնն է, ինչ առաջին կավանոթին, ներկված է բաց կարմրագույնով: Զառդանախշը կրկնում է առաջին կավանոթի վերին զարդազուտին՝ զծածակ եռանկյունիներ, այն ղեպում արված շաղանակազույն ներկով: Այս խմբի վերջին կավանոթը սև փայլով է, ունի կարճ վիզ, կլոր, ղեպի դուրս լայնացող շուրթ, ուռուցիկ իրան (աղ. 1, 3): Պարանոցի և իրանի անցումը ընդգծված է լայն խորագիր հորիզոնական գծով: Դրանից ցած՝ իրանի կենտրո-

¹ Առաջին ղեպքում դամբարանները տեղում ուսումնասիրվեցին և զոնված իրերը Հայաստանի պատմության թանգարան բերվեցին Ս. Ամիրջանի, Երկրորդ ղեպքում՝ Թ. Խաչատրյանի, Լ. Կարապետյանի և Ս. Ամիրջանի կողմից:

² К. Х. Кушнерова, Тазакендский могильник в Армении, СА, 1960, էջ 137—138: